ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էյչ Գրուպ ՍՊԸ-ն ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Canon	MF 3010	Canon	Սույն տեխնիկական բնութագիրը սահմանում է մատակարարման ենթակա լազերային ցանցային բազմաֆունկցիոնալ սարքի նվազագույն տեխնիկական, գործառութային և երաշխիքային պահանջները։ Տպման տեխնոլոգիան՝ մոնոխրոմ լազերային։ Տպման արագությունը՝ առնվազն 18 էջ/րոպե՝ A4 ձևաչափով։ Տպման որակը՝ առնվազն 1200 x 600 dpi պատկերի բարելավման տեխնոլոգիայով։ Տպման թույլտվությունը՝ առնվազն 600 x 400 dpi։ Առաջին էջի դուրս գալու ժամանակը՝ ոչ ավելի քան 8 վայրկյան։ Պետք է ապահովի տոների խնայողության ռեժիմ։ Պատճենահանման արագությունը՝ առնվազն 18 էջ/րոպե՝ A4 ձևաչափով։ Պատճենահանման թույլտվությունը՝ առնվազն 600 x 600 dpi։ Պետք է ապահովի կրճատում/խոշորացում՝ առնվազն 50–200%

					միջակայքով: Պետք է ապահովի նույնականացման քարտի պատճենահանում, 2-ը 1-ի վրա կամ համարժեք գործառույթներ: Սկանավորման տեսակը՝ գունավոր և սև-սպիտակ: Սկաների տեսակը՝ հարթակային / flatbed: Օպտիկական սկանավորման թույլտվությունը՝ առնվազն 600 x 600 dpi: Ընդլայնված սկանավորման թույլտվությունը՝ մինչև 9600 x 9600 dpi կամ համարժեք: Գունավոր սկանավորման խորությունը՝ առնվազն 24 բիթ: Մոխրագույն սանդղակ՝ առնվազն 256 մակարդակ: Համատեղելիություն՝ TWAIN, WIA կամ համարժեք: Սկանավորման առավելագույն ձևաչափը՝ առնվազն A4: Թղթի մուտքագրում՝ առնվազն 150 թերթ: Թղթի ելքի տարողություն՝ առնվազն 100 թերթ: Աջակցվող ձևաչափեր՝ A4, A5, B5, Letter, Legal կամ համարժեք: Թղթի խտություն՝ առնվազն 60–163 գ/մ² կամ ավելի լայն միջակայք: Միացում՝ USB 2.0 High Speed կամ համարժեք: Սարքը պետք է ունենա LED սեգմենտային էկրան: Համատեղելիություն՝ Windows 10/11 կամ համարժեք օպերացիոն համակարգերի հետ: Հիշողություն՝ առնվազն 64 ՄԲ: Սարքը պետք է ունենա օգտագործման համար հարմար կառավարման վահանակ կամ էկրան: Առաջարկվող ամսական տպման ծավալը՝ առնվազն 250–1000 էջ: Առավելագույն ամսական բեռնվածությունը՝ առնվազն 8000 էջ: Սնուցում՝ 220–240V AC, 50/60Hz կամ ավելի լայն միջակայք: Աշխատանքային ջերմաստիճան՝ 10–30°C կամ ավելի լայն միջակայք: Մատակարարվող քարթրիջը պետք է լինի արտադրողի օրիգինալ, նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ:

					Քարթրիջի տպման ռեսուրսը՝ առնվազն 1500 էջ՝ ISO/IEC 19752 կամ համարժեք մեթոդաբանությամբ: Փաթեթը պետք է ներառի բազմաֆունկցիոնալ սարք, սնուցման մալուխ, քարթրիջ, օգտագործողի փաստաթղթեր կամ արագ մեկնարկի ուղեցույց, անհրաժեշտ ծրագրային ապահովման կամ ներբեռնման հղումների վերաբերյալ տեղեկատվություն: Սարքի հետ պետք է մատակարարվի առնվազն 2 մետր երկարությամբ USB միացման մալուխ: Երաշխիքային ապահովում և սպասարկում • Երաշխիքային սպասարկում մեկ տարի • Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում (Սպասարկումը՝ Երևան, Զաքյան 8) և արտադրողի կամ արտադրողի կողմից լիազորված ներկայացուցչի տեղեկանք այն մասին, որ ապրանքը նախատեսված է Հայաստանի Հանրապետությունն ընդգրկող տարածաշրջանում սպառման և սպասարկման համար: (ՄԱՖ կամ ԴԱՖ): Պարտադիր պայման՝ Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային փաթեթավորմամբ: Մատակարարվող բոլոր սարքավորումները պետք է ունենան հստակ նույնականացվող արտադրող և մոդել: Արտադրողի պաշտոնական կայքէջում պետք է հասանելի լինեն տվյալ սարքավորման տեխնիկական բնութագիրը և անհրաժեշտ ծրագրային ապահովումը: Սարքավորումները չպետք է լինեն արտադրողի կողմից հայտարարված (End of Life / End of Support) կարգավիճակում: Չի թույլատրվում մատակարարել անանուն, առանց արտադրողի և մոդելի հստակ նշման կամ արտադրողի կողմից շրջանառությունից և

				սպասարկումից հանված սարքավորումներ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Эйдж Групп ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-26/44 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
3				